

ծովակը,- կը վկայէ ամերիկեան փաստավաւերագրական ժապաւէններու յայտնի արտադրիչ Մայքըլ Յակոբեան ու կը շարունակէ,- հայրս բժիշկ էր ու ձիով կը շրջագայէր, իսկ մենք փոքր էինք եւ մեզի համար գերագոյն հաճոյք մըն էր ըլլալ

ծովակի ափին, որուն յատակը օր մը թափուեցան իմ ազգիս անմեղ մարդոց ողջ կամ սպաննուած մարմինները...:

Տարիներ ետք այդ ողբերգական դէպքերեն, Մայքըլ Յակոբեան աշխարհի խլացած ականջներուն փորձեց հասցնել այն ճիչերը, որոնք կու գային Եփրատի ու ծովակի յատակեն։ Գտէք ու դիտեցէք «Ձայներ Լճակեն» (Voices From The Lake) փաստավաւերագրական ֆիլմերը, որոնք ձեզի պիտի յուշեն թէ ինչո՞ւ համար 5 Օգոստոս 2011-ին, այս տողերու հեղինակը չկրցաւ ուտել լճակին ընտիր «ճերմակ ձուկը» ու գիշերուան մութին մէջ գնաց լճափ՝ իր մորմոքի ճիչը լուռ ու մունջ միախառնելու յատակէն եկած ձայներուն։



TESTIMONY



"It is unlawful to designate the Armenian assets as "abandoned goods" for the Armenians, the proprietors, did not abandon their properties voluntarily; they were forcibly, compulsorily removed from their domiciles and exiled. Now the government

through its efforts is selling their goods ... Nobody can sell my property if I am unwilling to sell it. Article 21 of the Constitution forbids it. If we are a constitutional regime functioning in accordance with constitutional law we can't do this. This is atrocious. Grab my arm, eject me from my village, then sell my goods and properties, such a thing can never be permissible. Neither the conscience of the Ottomans nor the law can allow it."

"Let's face it, we Turks savagely killed off the Armenians."

Ahmed Rıza, Young Turk politician and President of the first Ottoman parliament

UPCULDBUPT

Եղիվարդ

Արշալոյսին, Երկինքին մէջ կը մարէին Աստղերն ամէն, Ծոցն ամպերուն, Դագաղներու առջեւ անտես, Կը վառէին լոյսեր կապոյտ։

Երկրի վըրայ, Կը տըժգունէր մոմ մը վըտիտ, Քաղաքն անդին, Կ՝արթըննար իր խըռովքներէն, Աչւըներուն՝ երազ կարմիր։

Արշալոյս էր, Քայց աշխարհը, վայրկեաններու Դանակներով, Իր երազները կը մորթէր։

Անդին, մարդեր գազանօրէն, Ժամանակի հայելիէն Կը դիտէին, Ոճիրները գալիքներուն։

